

« Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 25/6

21 մայիսի 2013թ.

Քննարկվեց Ա/Ձ Գարեգին Դադիվանյանի դիմում-բողոքը « ԿԱ ՊԵԿ 19.03.2013 թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2208368 արձանագրության դեմ:

Ա/Ձ Գարեգին Դադիվանյանի դիմում-բողոքում մասնավորապես նշված է.

2013 թ-ի մարտի 19-ին « ԿԱ ՊԵԿ աշխատակիցները եկել են ք.Տաշիր, Երևանյան խճ. 177 հասցեում գանվող իմ խանութ, առանց հանձնարարագրի: Խանութում այդ պահին գնորդ չի եղել:

Տեսուչներն իրենք են գցել զումարը, որից անմիջապես հետո ներկայացել են որպես հարկային տեսուչներ, ներկայացրել 2013 թ-ի մարտի 01-ով լրացված հանձնարարագիրը և կազմել արձանագրություն, որը հրաժարվել ենք ստորագրել: Գտնում եմ, որ հարկային տեսուչները խախտել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» « օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածների պահանջները: Այսպես, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» « օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «ստուգումն անցկացնելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարը, /փոխարինող պաշտոնատար անձը/ ստուգում իրականացնելու մասին հրապարակում է հրաման կամ հանձնարարագիր.. »

Տվյալ դեպքում հարկային տեսուչները գումարը գցելուց առաջ որևէ հանձնարարագիր ցույց չեն տվել:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» « օրենքի 4-րդ հոդվածի 1 մասի համաձայն. «տնտեսավարող սուբյեկտի մոտ մեկ ստուգման ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան 15 անընդմեջ աշխատանքային օր՝ յուրաքանչյուր տարվա համար, ընդ որում, ստուգման առաջին օր է համարվում ստուգումը փաստացի սկսելու օրը: Ստուգումը փաստացի սկսելու օր է համարվում ստուգվող օբյեկտում պահվող ստուգման մատյանում համապատասխան գրառում կատարելու օրը»: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն. «ստուգման ժամկետը չպետք է գերազանցի ստուգում իրականացնելու մասին համապատասխան պետական մարմնի ղեկավարի հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետը»:

Տեսուչները տվյալ դեպքում նախապես ստուգման մասին հանձնարարագիրը չեն ներկայացրել, մատյանում համապատասխան գրառում չի կատարվել: Տեսուչները ներկայացել են խանութ հանձնարարագրում նշված ժամկետն ավարտվելուց 9 օրացույցային, 16 աշխատանքային օր անց, որն ակնհայտ խախտում է:

Ստուգման հանձնարարագրում նշված է ոմն քաղաքացու անուն, որն իրականում այդ ժամանակ իմ խանութում չի եղել, գնում չի կատարել: Նման գրառումը անօրինակն է:

Վերջին հաշվով գտնում եմ, որ ստուգման նպատակը ոչ միայն պատժելն է, այլ խախտումներն կանխարգելելը, իսկ տվյալ դեպքում հենց տեսուչների կողմից է խախտվել օրենսդրությունը և նրանց գործողությունները միանշանակ ուղղված են եղել ինձ պատժելուն:

Հաշվի առնելով վերոգրյալը խնդրում եմ վերացնեք « ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ Տաշիրի տ/բ տեսուչների կողմից կազմված 19.03.2013թ. թիվ 2208368 արձանագրությունը:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Գարեգին Դադիվանյանի ներկայացուցիչների և ուսումնասիրության արձանագրությունը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ դիմում-բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի 01.03.2013 թ-ի թիվ 2208368 հանձնարարագրի Ա/Ձ Գարեգին Դադիվանյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում կազմվել է « ԿԱ ՊԵԿ 19.03.2013 թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2208368 արձանագրությունը, որով մասնավորապես արձանագրվել է.

Գլխավոր հարկային տեսուչ Մարգարիտա Հովսեփյանի կողմից 19.03.2013 թ-ին, ժամը 12:30-ին, Ա/Ձ Գարեգին Դադիվանյանին պատկանող ք.Տաշիր, Երևանյան 177 հասցեում գտնվող

խանութից կատարվեց հսկիչ գնում 500 դրամի չափով (մեկ զույգ տղամարդու գուլպա), որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ա/Ձ Գարեգին Դադիվանյանի վաճառողուհի Ա.Բալայանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Քննարկման ընթացքում Հանձնաժողովի անդամները նախ նշեցին, որ դիմում-բողոքում բերված փաստարկները, որ խախտվել են <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածների պահանջները, հիմնավոր չեն, քանի որ տվյալ դեպքում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն՝ հսկիչ գնում (այլ ոչ թե ստոգում), որի իրականացման կարգը սահմանված է <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի Հավելված 2-ով: Միևնույն ժամանակ, դիմում-բողոքի քննարկման ընթացքում հսկիչ գնումն իրականացրած պաշտոնատար անձը նշեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ 19.03.2013 թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2208368 արձանագրությունում նշված գնումը կատարվել է իր անձնական միջոցների հաշվին:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում խախտվել են ՀՀ կառավարության 27.11.2003թ. թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված <Հսկիչ գնումների ֆինանսական աղբյուրների և ձեռք բերված ապրանքների տնօրինման կարգ>-ի (այսուհետ՝ Կարգ) պահանջների խախտմամբ: Մասնավորապես, Կարգի 5-րդ կետի համաձայն. <Հսկիչ գնում կատարելու համար անհրաժեշտ դրամական միջոցները հատկացվում են հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի գրավոր թույլտվությամբ՝ վերադաս հարկային մարմնի ֆինանսահաշվային կառուցվածքային ստորաբաժանման կամ հարկային տեսչության հաշվապահական հաշվառման վարման լիազորություններ իրականացնող պաշտոնատար անձի կողմից>:

Իր հերթին, Կարգի 6-րդ կետի համաձայն. <Հսկիչ գնման համար անհրաժեշտ դրամական միջոցներ ստանալու համար ֆինանսահաշվային կառուցվածքային ստորաբաժանում կամ հարկային տեսչության հաշվապահական հաշվառման վարման լիազորություններ իրականացնող պաշտոնատար անձին են ներկայացվում միջնորդագիրը՝ հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի թույլտվությամբ, հանձնարարագրի պատճենը, հսկիչ գնում կատարելու համար գումար ստացողի անունը, ազգանունը և պաշտոնը>:

Կարգի 6.1 կետի համաձայն. <Հսկիչ գնման (գնումների) արդյունքում հսկիչ գնում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից հանձնարարագիրը ներկայացվելուց և արձանագրությունը կազմվելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն կարգի 6.2-րդ կետում նշված ժամկետները, տնտեսավարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողին են վերադարձվում հսկիչ գնմամբ (գնումներով) ձեռք բերված ապրանքը (ապրանքները), եթե չեն փոփոխվել դրա (դրանց) գնման պահին առկա ապրանքային հատկանիշները>:

Քննարկվող դեպքում խախտվել են նաև Կարգի 6.1 կետի պահանջները՝ հսկիչ գնման ընթացքում ձեռք բերված ապրանքը չի վերադարձվել տնտեսավարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Ա/Ձ Գարեգին Դադիվանյանի դիմում-բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ 19.03.2013 թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2208368 արձանագրությունը:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ